<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը սովորողների մեջ հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում

Դպրոց՝ <<Ագարակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Ուսուցչուհի՝ Սաթիկ Ասատրյան

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն---------- 3
2. Արժեքային համակարգի ձևավորումը սովորողների մեջ առարկայի դասավանդման ընթացքում----------5
3. Մեթոդական մաս----------13
4. Եզրակացություն----------17
5. Օգտագործված գրականության ցանկ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ։ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքների պահանջների մեջ նշվում են արժեքները, որոնք պետք է տա դպրոցը։

Յուրաքանչյուր սերնդի արժեհամակարգ ձևավորվում է նոր պահանջմունքների, նոր մեթոդների հիման վրա։ Դա պարտադրվում է հենց այդ սերնդի կողմից։ Մանկավարժական և փիլիսոփայական եզրույթների բացատրությունները՝ կապված արժեք, արժեհամակարգ, բարոյականություն և նման բովանդակություն ունեցող բառերի հետ, մնում են անփոփոխ։ Սակայն դրանց հասնելու և դրանք ձևավորելու համար յուրաքանչյուր ուսուցիչ պետք է կարողանա շարժվել հենց այդ ժամանակի թելադրանքով՝ ժամանակի ու սերդնի փոփոխությունից ոչ թե դժգոհելով, այլ այն դարձնելով մեթոդական զենք։

Նոր ժամանակներում, երբ աշխարհը կարծես թե վերաքարտեզագրման փուլում է, և պատերազմները, համաճարակները, առհասարակ բոլոր աղետները վերահամոզում են մեզ, որ մարդկային ռեսուրսը աշխարհում ամենակարևորն է, մարդու արժեհամակարգի ձևավորումը առաջնային է դառնում, քանի որ միայն այդպես կարող է հաղթել ու հաղթահարել գոյության կռվի փորձությունները։

Հայաստանի Հանրապետությունն այսօր էլ կանգնած է լինել-չլինելու կռվի առջև։ Ուստի օրհասական ու գերառաջնային է ունենալ բարոյական բարձր արժեհամակարգ ունեցող քաղաքացի։

Հայ գրականության ուսուցչի ուսորին դրված է բեռան հսկայական ծավալ։ Ինչու՞. սա այն առարկան է, որը լայն հնարավորություններ է ընձեռում քննարկելու,

վերլուծելու, մեկնաբանելու, բանավիճելու տարբեր ժամանակների իրական և գեղարվեստական տարբեր հերոսների և նրանց արարքների շուրջ։

Թեմայի արդիականությունը: Կրթական բարեփոխումների շրջափուլում պատերազմական դրության մեջ հայտնված պետության համար խիստ կարևոր է դպրոցի դերը՝ որպես բարձր արժեհամակարգով քաղաքացի կերտող կառույց։

Անհրաժեշտ է սովորողի մեջ ձևավորել և զարգացնել իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքներ։

Աշխատանքի նպատակները.

- կիրառել մեթոդական հնարներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար։
- ուսումնասիրել և ներկայացնել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հայոց լեզվի և գրականության դասաժամերին որևէ թեմայի ուսուցման օրինակով։
- գտնել լավագույն լուծումները նպատակին հասնելու համար։

Նպատակներին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին։
- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն։
- Ներկայացվող նյութը արդունավետ օգտագործել՝ աշակերտի մեջ ձևավորելով արժեհամակարգին բնորոշ հատկանիշները։
- Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը։
- Օգտագործել ճիշտ ընտրված ուսումնական մեթոդներ՝ դասի դաստիարակչական մասը ապահովելու համար։

Արժեքային համակարգի ձևավորումը սովորողների մեջ առարկայի դասավանդման ընթացքում

«Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների դերը, ինչպես հումանիտար շատ առարակաների, արժեհամակարգի ձևավորման և նրա կայունության համար հանրակրթական բնագավառում անփոխարինելի նշանակություն ունի:

Գրականությունը բովանդակում է դաստիարակչական մեծ ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Չէ՞ որ գրականության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու և պահպանելու հայի կերպարը:

Սխալված չենք լինի եթե առձանագրենք, որ հիմա և միշտ մեզ համար արժեքների բուրգի գագաթին գտնվող ամենանվիրական և մեծագույն արժեքը հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայ գրականության դասերի ժամանակ:

Կրելով վերը նշված և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ

միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են **ավանդական միջոցները**, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը **տարիքայինն** է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը **միջանձնային** հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն

կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Պետք է խոստովանել, որ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս

տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը:

Իսկ ինչպիսի՞ արժեքային համակարգ ենք ուզում ունենալ հանրակրթական դպրոցում: Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Եվ այդ ամենը կատարվում է հենց կրթության միջոցով ու կրթության ֆոնի վրա: Կրթության առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է: Կարծում ենք, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Մանկավարժը, ուսուցիչը պետք է սեփական օրինակով դաստիարակեն սանին, օրինակ ծառայեն, քանի որ օրինակի ուժը զորեղ է:

Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Արժեքային համակարգի չափանիշները սահմանում են, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է

- լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,
- ունենա ազգային ինքնագիտակցություն,
- գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- գնահատի իր ժողովրդի արժեքներն ու ավանդույթները:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները, և ոչ թե նրանց մի մասը: Իսկ դա ինքնաբերաբար լինել չի կարող, և անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում ստեղծի համապատասխան իրադրություն և ապահովի անհրաժեշտ պայմաններ: Անհրաժեշտ պայմաններից մեկը, թերևս առաջնայինը, այն է, որ ստեղծվեն այնպիսի դրական շարժառիթներ և բարենպաստ դրդապատճառներ, որոնք

աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության: Իսկ այդ դրդապատճառները բացահայտելու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը:

21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:

Սովորողների անձի արժեքների ձևավորման համակարգում կարևոր նշանակություն ունեն ուսուցանվող նյութերը: Շրջանավարտի արժեհամակարգի զարգացման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողները,որոնք ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում **լեզվի և գրականության** դասավանդումը դուրս է գալիս սոսկ մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չափազանց մեծ է:

Արժեհամակարգը ձևավորվում է **գրականության դասընթացում**, որտեղ կա աշակերտի համար անձնային նշանակություն ունեցող և ստեղծագործական համագործակցության մթնոլորտ: Արժեհամակարգը ենթադրում է կայուն ընտրովի վերաբերմունք աշխարհի և կյանքի հանդեպ :

Ինչպես վերևում նշվեց, արժեհամակարգի բուրգի գագաթին գտնվող մեծագույն արժեքը հայրենասիրությունն է: Հայ գրականության մեջ շատ են այնպիսի ստեղծագործություններ, որոնք հայրենասիրական դասեր են տալիս հետագա սերունդներին, և մեր պարտքն է այդ ամենը սովորողներին փոխանցել գրականության դասաժամերին:

Հայրենասիրությունը վառ կերպով արտահայտվել է մեր նշանավոր գրողների՝ Մուրացանի, Ռաֆֆու և Դ. Դեմիրճյանի պատմական վեպերում, որոնք իրենց մեջ ներառում են արժեհամակարգի դրսևորման ամբողջություն:

«Պատմական ստեղծագործություններում դու ես ընտրում քո ժամանակն ու հերոսներին, իսկ ժամանակակից թեման ինքն է պարտադրում իր պահանջները: Ներկան միշտ էլ իր վերջնական գնահատականը ստանում է անցյալ դառնալուց հետո»:[1] Այս պատավիպասանները գրական նույն հնարին են դիմել: Պատմական ծանր ժամանակներում փորփրել են անցյալը, գտել հերոսական դրվագ և ներկայացրել որպես օրինակ: Ցույց են տվել անցյալի սխալները, պարտության հետևանքները, հաղթանակի հասնելու լծակներն ու ճանապարհները:

Այդ ստեղծագործություններն ընդգրկված են ավագ դպրոցի հայ գրականության ծրագրում:

Մեր հետազոտական աշխատանքում կանդրադառնանք Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի ուսուցմանը:

Ինչու՞ հատկապես այս պատմավեպը:

Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը հայրենասիրության արտահայտման վառ օրինակ է, որտեղ առկա է հայրենասիրական մեծ շունչ ու ոգի: Գլխավոր հերոսի՝ Գևորգ Մարզպետունու համար հայրենասիրությունը ամենաբարձր արժեքն է, որը ինքն անվանում է «անձնականը ընդհանուրին զոհելու քաջություն»: Պատմավեպում ոչ ոք այնքան ծանր չէր վերապրում հայրենական ողբերգությունը, որքան Մարզպետունին: Եվ պատահական չէ, որ նա ապագա սերունդներին կտակում է մարդկային առաքինությունը կազմավորող երեք կարևոր պատգամ, որոնք խորհրդանշում են հայրենիքի գոյության ու հզորության հիմքը՝ Անձնազոհություն, Միություն, Ընտանիք: Գլխավոր հերոսի համար առանձնահատուկ արժեք է համարվում նաև ընտանիքը, և նրա ուխտն էր չվերադառնալ ընտանիքի գիրկը, քանի դեռ վերջին հագարացին չի հալածվել երկրի սահմաններից:

[1] Գրական թերթ, 1985, թիվ 16, էջ 16:

Մուրացանը, իր ընթերցողներին հայրենասիրություն ու խիզախություն է ուսուցանում։ Հենց դա է ստեղծագործության հիմնական գաղափարն ու իմաստը։ Բացի այդ հեղինակը վեպի միջոցով հաղորդում է իր անծայրածիր սերը հայրենիքի նկատմամբ։

Ստեղծագործության բովանդակությունը կարծես յուրօրինակ պատգամ լինի երիտասարդ սերունդներին, ովքեր պետք է դաստիարակվեն գրքի դրական հերոսների նման։ Այս ստեղծագործությամբ, և հատկապես Մարզպետունու կերպարով սովորողների մեջ պետք է ձևավորվի սեփական հայրենիքը սիրելու զգացողություն, և նրանցից յուրաքանչյուրի համար պետք է հայրենիքի պաշտպանությունը լինի սուրբ և նվիրական գործ։

«Հսկայական ջանքեր են պետք գտնելու այն իդեալ հերոսին, որի օրինակը կարող էր վարակիչ լինել, արժանի հետնորդներ ունենալ»[2]։ Այնպիսի ժամանակներում ենք ապրում, որ հենց այդ առաքյալի կարիքը կա։ Մուրացանը երկար փնտրեց այդ հերոսին տարբեր ստեղծագործություններում, վերջապես գտավ պատմավեպում։ Հիմա մենք էլ կարծես փնտրումների մեջ ենք։ Մեզնից ամեն մեկը կարող է դառնալ այդ առաքյալը։ Այսօր ամեն մեկը պարտավոր է հաղթահարել սեփական եսը հանուն ընդհանուրի շահի. «Մարզպետունին անձնավորում է հայրենասերի այն իդեալը, որն ինքն անվանում է անձնականը ընդհանուրին զոհելու քաջություն»[3]։

Պատերազմը պարտված երկրում պարտավոր ենք աշակերտների մեջ կոտրված իդեալները վերակառուցել, անկումից հետո բարձրացնել, ցույց տալ, որ ինչ էլ լինի, դարձյալ պետք է ոտքի կանգնել՝ «…. հաղթահարելով անձնական փլուզման վախը, անկումները և տեղ հասցնել ուժը, ոգին՝ թաքնված պատմության ծալքերում, որ պահել ու պահելու է մեզ»[4]։ Պատմությունը որքան էլ դառը փորձով է հարուստ, նույնքան էլ հագեցած է դասերով։ Գլխավորներից է գտնել ոգին, որ ստիպելու է պայքարել։

---

[2] Լ. Գալստյան, Վարդան Գրիգորյանի պատմավիպասանությունը, Երևան 2003, էջ 7։

[3] Ս. Սարինյան, Մուրացան, Երևան, 1976, էջ 327։

[4] Գրական թերթ, 1990, թիվ 52, էջ 25։

Ըստ գրականագետ Սարինյանի. «Մուրացանի հերոսը ոչ թե հայրենասեր-քաղաքացին է, այլ բարոյական մարդը»[5]: Սա նշանակում է, որ այս պատմավեպի աշխարհագրությունը չի նեղանում միայն Հայաստանի տարածքային սահմանում և կոնկրետ ժամանակաշրջանում: Սա նշանակում է, որ այն դաստիարակում է առողջ մտածողությամբ, հասուն գիտակցությամբ, պատասխանատու ու բարոյական քաղաքացի:

[5] Ս. Սարինյան, Մուրացան, Երևան, 1976, էջ 326:

Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի ուսուցումը։

Դասի նպատակն է վեպի ուսումնասիրմամբ և վերլուծմամբ սովորողների մոտ որպես բարձրագույն արժեքներ ձևավորել հայրենասիրություն և անձնվիրություն։

Թեմայի ուսուցման արդյունքում կունենաք հետևյալ վերջնարդյունքերը. սովորողները

- կկարողանան վերլուծել կերպարները,
- կկարողանան մեկնաբանել իրենց կարծիքը,
- կձևավորվի քննադատական մտածողություն,
- կձևավորվի ճիշտ պատկերացում արժեքային համակարգի վերաբերյալ։

Համագործակցելով «Հասարակագիտություն» առարկայի ուսուցչի հետ՝ գրականության ուսուցիչը ստեղծում է միջառարկայական կապ։ Այսպես՝ «Հասարակագիտություն» առարկայի շրջանակում 8-րդ դասարանում աշակերտները ծանոթանում են «ազատություն» և «պատասխանատվություն»[6] երևույթներին, որոնք՝ որպես գաղափար, հստակ ընդգծված են «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում։ 10-րդ դասարանում աշակերտները նույն առարկայի դասընթացի ժամանակ ուսումնասիրում են «բարոյական կշռադատումները» և «բարոյական երկընտրանքները»[7]։ Հասարակագիտության ուսուցչի հետ քննարկելով այս երևույթների փիլիսոփայական և գիտական մեկնաբանությունները, որոնք անմիջականորեն կապված են վեպի գաղափարների, հերոսների հոգեբանական վերլուծությունների հետ, ավելի պատրաստված են լինում գրականության դասի քննարկմանը։

[6] Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան, Հասարակագիտություն 8-րդ դասարան, Երևան, 2013, էջ 59, 90։

[7] Ս. Պետրոսյան,Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան, Կ. վարդանյան, Կ. Աղաջանյան, Հասարակագիտություն 10-րդ դասարան, Երևան, 2009, էջ 81, 84։

Դասի ընթացքը:

Դասը կկառուցենք ԽԻԿ համակարգի միջոցով[8]:

Խթանման փուլ:

Ուսուցիչը, օգտվելով նորագույն տեխնոլոգիաների հնարավորությունից, աշակերտներին հիշեցնում է պատմավեպի հետ կապված մի շարք տեղեկություններ. միացնում է «Գևորգ Մարզպետունի» թեմայով տեսադասից մի հատված[9]:

Գրատախտակի կենտրոնում «գաղափարների գծագրում»[10] մեթոդի նմանությամբ գրում է «արժեք» բառը և սովորողներին հարցնում, թե ինչ արժեքներ գիտեն: Նրանք թվարկում են մի քանիսը, իսկ նրանցից մեկը գրատախտակին գրում է դրանք: Այնուհետև հանձնարարվում է գրված արժեքներից առանձնացնել և ընդգծել նրանք, որոնց հանդիպում են պատմավեպում: Ապա հանձնարարվում է հիշել դեպքեր կամ իրավիճակներ, որտեղ իրենք հանդիպել են այդ արժեքներին:

---

[8] Այն խիստ արդյունավետ ձև է դասը ճիշտ պլանավորելու և արդյունավետ ներկայացնելու համար: Այս համակարգի կիրառումը հնարավորություն է ընձեռում իրականացնելու ուսումնական տարբեր գործողություններ, որոնք էլ իրենց հերթին օգնում են ուսուցչին ուղղորդելու սովորողին, ակտիվացնելու նրանց մտածողությունը, արդյունավետ քննարկումներ ծավալելու և այլն: Ն. Տողանյան, Հ. Խաչատրյան, Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2008, էջ 3:

[9] Youtube.com/watch?v=CgA-t6XQvwY

[10] «Գաղափարի գծագրի կազմում» (խմբավորում)
Առանձին թղթի կենտրոնում գրվում է թեմայի վերնագիրը, առանցքային բառը, նախադասությունը կամ հասկացությունը և վերցվում շրջանակի մեջ: Կենտրոնից առանձին գծիկներով առանձնացվում են կենտրոնական մտքից բխող գաղափարները…. »: Ն. Տողանյան, Հ. Խաչատրյան, Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2008, էջ 83:



Իմաստի ընկալման փուլ:

Այս փուլում աշակերտները, օգտվելով բնագրից, դասագրքային վերլուծություններից, քննարկելու են պատմավեպը, հայտնեն սեփական կարծիքը, վերլուծեն, հիմնավորեն իրենց մոտեցումները[11]:

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրվում է պատմավեպից մեկ վերնագիր: Նրանք, արդեն կարդացած լինելով վեպը և ծանոթ լինելով հատվածի բովանդակությանը, պետք է հիմնավորեն այդ գլխի վերնագիրը, նրանում երևացող գլխավոր գաղափարը, ներկայացված արժեքը:

Առաջարկվող վերնագրերը կարող են լինել հետևյալները.

- «Կույր վրիժառուն»,
- «Կույր աչքը կներե, կույր սիրտը չի ներիլ»,
- «Բյուրականի առումը»,
- «Մի ծաղկով գարուն»,
- «Դվնո առումը»:

---

[11] Խիստ կարևորվում է այն, որ սովորողները նյութը յուրացնեն ոչ միայն այն լսելով, դիտելով, մտապահելով, անգիր վերարտադրելով, այլև՝ մասնակցելով, մտածելով, հաղորդակցվելով, հարցնելով, բանավիճելով, ինքնուրույն մտքեր հայտնելով և այլն: Ն. Տողանյան, Հ. Խաչատրյան, Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2008, էջ 5:

Կշռադատման փուլ՝

Ուսուցիչը աշակերտների հետ մփոփվում է դասը, և գրականության տետրերում արձանագրում են պատմավեպի սովորեցրած գլխավոր արժեքները, ինչպես, օրինակ, անձնազոհություն, ընտանիք, միություն, հայրենասիրություն, պետական մտածողություն…։

Հանձնարարվում է տնային առաջադրանք՝

Պատմել պատմավեպից որևէ դեպք նախընտրած հերոսի անունից առաջին դեմքով։

Եզրակացություններ

- Արժեքային համակարգի ձևավորումը սովորողների մեջ հայոց լեզվի և գրականության դասաժամերին առաջնահերթություն է՝ հատկապես պայմանավորված մեր պետության աշխարհաքաղաքական և ներքին խնդիրներով։
- Նյութի յուրացմանը նպաստում են միջառարկայական կապերը, որոնք օգնում են թեմայի ամբողջական ու խորքային յուրացմանը։
- Համեմատելով մեր օրերի հետ, ցույց տալով թեմայի արդիականությունը՝ բարձրանում է սովորողների սովորելու մոտիվացիան և ուսուցման արդյունավետությունը։
- Բարձր արժեհամակարգ ձևավորելու համար արդյունավետ եղանակներից է պատմավեպերի ուսուցումը։
- Կարևոր բաղադրիչ է աշակերտակենտրոն ուսուցումը, ինչը հնարավորություն է տալիս սովորողներին վերլուծել, մեկնաբանել, համապատասխան եզրահանգումների գալ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

1. Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան, Հասարակագիտություն 8-րդ դասարան, Երևան, 2013։
2. Լ. Գալստյան, Վարդան Գրիգորյանի պատմավիպասանությունը, Երևան 2003։
3. Ս. Պետրոսյան,Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան, Կ. վարդանյան, Կ. Աղաջանյան, Հասարակագիտություն 10-րդ դասարան, Երևան, 2009։
4. Ս. Սարինյան, Մուրացան, Երևան, 1976։
5. Ն. Տողանյան, Հ. Խաչատրյան, Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2008։

Թերթեր

6. Գրական թերթ, 1985, թիվ 16։
7. Գրական թերթ, 1990, թիվ 52։

Համացանց

8. Youtube.com/watch?v=CgA-t6XQvwY

Հավելված

Օրվա դասի պլան - 1

Ուսուցիչ՝ Սաթիկ Ասատրյան

Առարկա	Գրականություն
Դասարան /աշակերտների քանակը՝24/	10-րդ բ
Բաժին	«Սասնա ծռեր» էպոսը
Դասեր	**Դաս 1.**Ընդհանուր ակնարկ դյուցազներգության մասին, կառուցվածքն ու ընդհանուր բովանդակությունը **Դաս 2.**Դյուցազներգությունը՝որպես բանահյուսական տեսակ, պատմական հիմքը **Դաս 3** Էպոսի ճյուղերը **Դաս 4.** Գլխավոր հերոսները **Դաս 5-6** Ամփոփում
Թեմա	**Դաս 3.**Էպոսի ճյուղերը, բովանդակությունը
Բաժնի նպատակը	● Ծանոթացում մեր ինքնության ակունքներին: ● Գլխավոր գաղափարի ըմբռնում: ● Ազգային արժեքների պատմական, քաղաքական և մշակութային նշանակության ընկալում: ● Էպոսը՝որպես ժողովրդի համահավաք մտածողության,ձգտումների ու երազանքների արտահայտության ընկալում:
Դասի նպատակը	● Կարողանալ ներկայացնել դյուցազներգության ճյուղերի ամփոփ բովանդակությունը: ● Ներկայացնել դյուցազներգությունը՝ որպես բանահյուսական տեսակ: ● Արժևորել դյուցաներգությունն ու նրանում արծարծված գաղափարները:
Վերջնաարդյունքներ	● Ներկայացնել ճյուղերի բովանդակությունը: ● Վեր հանել հիմնական գաղափարը: ● Ուսումնասիրել պատմական ժամանակաշրջանը: ● Գնահատել փաստարկները:

	● Կազմել հիմնական և հարակից գաղափարների աղյուսակ: ● Ներկայացնել լեզուն և ոճը:
Ընդհանրական խաչվող հասկացությունները	**Ժամանակ և տարածություն** Հայրենասիրության և անձնազոհության ընկալումը ժամանակի և տարածության համատեքստում:
Միջառարկայական կապեր	● **Պատմություն –**Հայաստանը 10-րդ դարում /արաբական արշավանքներ/ ● **Հայոց լեզու-**դյուցազներգության լեզուն և ոճը ● **Արվեստ-** նկարչություն,երաժշտություն
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագրքեր, համակարգիչ,տեսանյութեր,մարկերներ,կպչուն թերթիկներ,ելքի քարտեր
Ուսուցման մեթոդներ	Մտագրոհ, զրույց, Տ-աձև աղյուսակ,հասկացությունների քարտեզ,խմբային աշխատանք
Գնահատում	Ձևավորող ու միավորային գնահատում
Դասի ընթացքը	Աշակերտների հաշվառում՝ **1-2 րոպե** Նախորդ նյութի ամփոփում **/մուտքի քարտ/ 7 րոպե** **1.** Նշիր 3 բան,որ հիշում են նախորդ դասից: **2.** Նշիր 2 բան, որ կարևորում ես: **3.** Նշիր 1 բան,որին կուզենայիր այս դասին անդրադառնալ:
Նոր նյութի հաղորդում և ամրապնդում	Ներկայացնել ● պատմական ժամանակաշրջանը ● էպոսի կառուցվածքը ● ճյուղերի բովանդակությունը ● արծարծված գաղափարը Կազմել հիմնական և հարակից գաղափարների աղյուսակ /Տ-աձև աղյուսակ/: **Խմբային աշխատանք** Յուրաքանչյուր խմբի հանձնարարել ճյուղերից մեկը՝ բնագրի շուրջ քարտային աշխատանք կատարելու համար:

Ամփոփում և գնահատում	Ամրապնդել,ամփոփել և գնահատել
Համեմատաբար պասիվ մասնակցություն ունեցած աշակերտների համար նախատեսված հարցեր **Կապը ՀՊՉ-ի հետ**	● Քանի ճյուղից է բաղկացած դյուցազներգությունը ● Ո՞ր ճյուղը ավելի շատ դուր եկավ և ինչու՞: ● Ի՞նչ հույզեր ու զգացմունքներ առաջացան դասի ընթացքում: 11-1, 11-16, 11-17, 11-34

Օրվա դասի պլան - 2

08.09.2023

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ս. Ասատրյան
ԱՌԱՐԿԱ՝ մայրենի
ԴԱՍԱՐԱՆԸ՝ VI

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Վ. Դավթյանի <<Զվարթնոցի արծիվը>> բանաստեղծությունը

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝

- Չափածո տեքստի սահուն ընթերցանություն, գաղափարական բովանդակության ընկալում, վերարտադրելու կարողության զարգացում
- հայկական ճարտարապետական կառույցների վերաբերյալ գիտելիքների խորացում
- բանաստեղծության մեջ հանդիպող նորածանոթ բառերի ընկալում և կիրառություն
- ազգային արժեքների հանդեպ հարգանքի ձևավորում

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ՝

- Արձակ շարադրանքով վերարտադրի բանաստեղծությունը
- Կողմնորոշի բանաստեղծության իմաստային բովանդակության մեջ և կարողանա պատասխանել դասագրքում զետեղված հարցերին
- Թեմայի վերաբերյալ իր կարծիքը արտահայտելու, գաղափարները հաստատելու համար վկայություններ, փաստարկներ օգտագործի՝ կիրառելով խոսքի նկարագրական ոճը
- Խոսքը համառոտագրի՝ կիրառելով համապատասխան կանոններ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ուսումնական նյութեր ՝դասագիրք, աշխատանքային տետր, համակարգչային նյութեր Զվարթնոցի մասին սահիկահանդես

Ուսումնական մեթոդներ և հնարներ ՝մտքերի տարափ, մտքերի քարտեզագրում, զրույց, հնգյակ, ընդհանրացնող հարցերի աղյուսակ,քառաբաժան :

Կազմակերպական աշխատանքներ, տնային հանձնարարությունների ստուգում, անհասկանալի հարցերի պարզաբանում:

Դասարանը բաժանել 4 խմբերի (աշխատում են արդեն ձևավորված խմբերով):

Խթանման փուլն սկսել <<Մտքերի տարափ>> հնարով: Դիմում ենք դասարանին հետևյալ հարցադրումով. <<Ճարտարապետական ի՞նչ հայտնի կոթողներ գիտեք,որոնք դարձել են Հայաստանի խորհրդանիշը>>: Գրատախտակին նշում ենք բոլոր պատասխանները, ապա հետևելով էկրանին՝ աշակերտները փորձում են ճանաչել ճարտարապետական հայտնի կոթողները:

Նմուշ՝



Տաթևի վանահամալիր

Մատենադարան

(10

բոպե)

Իմաստի ընկալման փուլ: Զվարթնոցի մասին ողջ տեղեկությունը,որը նախապես հանձնարարված էր սովորել, դասարանը ներկայացնում է ըստ 4 խմբերի՝

I խումբ – Զվարթնոցի տեղագրությունը և անվան ծագումը
II խումբ- Զվարթնոցի պատմությունը
III խումբ – Զվարթնոցի ճարտարապետությունը
IV խումբ- Զվարթնոցի արծվանիշ խոյակները
Այնուհետև ուսուցիչը ներկայացնում է նոր դասը: Աշակերտներից մի քանիսը ընթերցում են բանաստեղծությունը,որից հետո ուսուցիչը հանձնարարում է խմբային աշխատանք՝ երկու փուլերով՝ բառային և տեքստային:

I փուլ

I խումբ – Բառակազմորեն վերլուծել **խոյակ, հրաշագործ, հողմածեծ, սրաթև,արքայական** բառերը:
II խումբ- Բանաստեղծության միջից դուրս գրել **այուն,որմ,նախշ,արծիվ,գմբեթ,բեկոր** բառերի բնութագրումները:
III խումբ – Բանաստեղծությունից դուրս գրել 10 գրքային բառեր:
IV խումբ- Գտնել **խոյակ, որմ, հողմ, հառել,ճախրել, վսեմ** բառերի հոմանիշները:

II փուլ

I խումբ – Կազմել հնգյակ << Զվարթնոց >> բառով:
II խումբ- Մեկնաբանել բանաստեղծության 4-րդ քառատողը:
III խումբ – Աշխատանք <<Քառաբաժան>> մեթոդով:
IV խումբ- Վերլուծիր բանաստեղծության հանգավորումը ,նշիր բանատողերի վանկերի քանակը:

(25 րոպե)

Կշռադատման փուլ: Զվարթնոցի մասին ստացած գիտելիքների ամփոփման համար հանձնարարվում է լուծել թեմատիկ խաչբառը կամ բանաստեղծության գաղափարական բովանդակության ամփոփիչ վերլուծության համար կարելի է բանավոր լրացնել ուսուցչի ներկայացրած ընդհանրացնող հարցերի աղյուսակը:

Նմուշ՝

1	2	3	4
Ի՞նչ է խորհրդանշում Զվարթնոցի արծիվը:	Զվարթնոցի տաճարի գոյությամբ հայ մարդու ո՞ր հատկա-նիշներն են դրսևոր-վում:	Արվեստի մյուս բնագավառներում հայոց հանճարեղ մտքի ի՞նչ դրսևորումներ գիտեք:	Ազգային արժեքների հետ ինչպե՞ս պետք է վարվել:

Կազմակերպվում է գնահատում՝ խրախուսելով և՛ անհատական, և՛ խմբային ջանքերը: Տնային աշխատանքների համար հանձնարարվում է անգիր սովորել բանաստեղծությունը, գրել նամակ սփյուռքահայ ընկերոջը՝ պատմելով նրան Զվարթնոցի մասին:

Կատարվում է անդրադարձ.

- Դասի ընթացքում ի՞նչ նոր բան սովորեցիք:
- Ո՞ր տեղեկությունը կամ փաստը ձեզ վրա տպավորություն գործեց:
- Արդյունավե՞տ է արդյոք խմբային աշխատանքը: (10 րոպե)

Օրվա դասի պլան - 3

Ուսուցիչ – Ս. Վասարյան

Ամիս,ամսաթիվ - 08.09.2023թ.

Դասարանը – IXա

Առարկան - Գրականություն

Դասի թեման – Սայաթ - Նովա

Դասի տիպը - Ամփոփիչ

Նպատակը - 1. Ստուգել և գնահատել աշակերտների գիտելիքները

2. Գնահատել և արժևորել Սայաթ – Նովայի դերը հայ միջնադարյան քնարերգության մեջ

3. Տաղաչափական արվեստի ներկայացումը

Մեթոդներ – Զրույց , դիտում , հարց ու պատասխան , մտագրոհ , խաչբառ

Ցուցադրական նյութեր - սազ, իլիկ, թանաքաման վրձին, պաստառներ

Օգտագործվող նյութեր - պրոյեկտոր , համակարգիչ

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ՝ 1. Սայաթ – Նովայի կենսագրության կարևոր դրվագները / ներկայացնում են աշակերտները /

2. Ստեղծագործությունները / թվարկում են , ասմունքում/

Իմաստի ընկալման փուլ

1. Սայաթ – Նովան իբրև սիրերգակ
2. Հարցեր՝ Ինչպե՞ս է դասավորվել հետագա կյանքը
3. Կնոջ մահից հետո ի՞նչ ճակատագիր ունեցավ

4. Ի՞նչ ավանդություն կարող եք հիշել Սայաթ – Նովայի մասին
5. Բանստեղծական ի՞նչ տեսակով է ստեղծագործել
6. Ի՞նչ գնահատանքի խոսքեր են հնչել նրա մասին
7. Ի՞նչ լեզուներով է ստեղծագործել
8. Ի՞նչ տոն է նշվում ամեն տարի գարնանը
9. Հետագա ո՞ր գրողներն են ազդվել նրա տաղերի

Կշռադատման փուլ -Խաչբառ ,, Սայաթ – Նովա ,,

Հարցերով անդրադարձ

Գնահատում

Տնային աշխատանք - Զրուցի՛ր Սայաթ – Նովայի հետ